# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 271-Ա « 30 » հունվարի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 6.1-րդ կետով.

1. Հաստատել «Ա. Իսահակյանի անվան կենտրոնական գրադարան», «Շառլ Ազնավուրի անվան գրադարանների կենտրոնացված համակարգ», «Երևանի Ավան համայնքի թիվ 1 գրադարան», «Թիվ 5 գրադարան», «Թիվ 6 գրադարան», «Թիվ 40 գրադարան», «Օքրո Օքրոյանի անվան թիվ 3 գրադարան», «Թիվ 10 գրադարան», «Թիվ 11 գրադարան», «Թիվ 25 գրադարան», ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի N 22 գրադարան, «Գրադարանային համակարգ», «Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Համո Սահյանի անվան գրադարան», «Թիվ 34 գրադարան», «Երևանի հ. 16 գրադարան», «Երևանի Շ. Կուրղինյանի անվան հ. 17 գրադարան», «Երևանի հ. 18 գրադարան», « Երևանի հ. 32 գրադարան» և «Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն համայնքի կենտրոնացված գրադարանային համալիր» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն NN 1-19 հավելվածների:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մշակույթի և տուրիզմի վարչության պետի և սույն որոշման 1-ին կետում նշված համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը վերապահել Երևանի քաղաքապետի տեղակալ Լ. Հովհաննիսյանին:

4. Սահմանել, որ սույն որոշման կատարման գործողությունները տարածվում են 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

